

Օգտագործելով Ռուսաստանի Դաշնության ղեկավարության բարյացակամ տրամադրվածությունը Հայաստանի Հանրապետության հանդեպ, անհրաժեշտ է մեր գործարանի կառուցման գործում ներգրավել Լիպեցկի լավագույն մասնագետներին և Հայաստան քերել Ռուսաստանի Դաշնությունում արտադրված այդ նորագույն տեխնիկան և մշակված տեխնոլոգիաները: Սակայն պետք է նշենք, որ Լիպեցկ քաղաքի «Սվորողնի սոկոլ» կոչվող մետալուրգիական կոմբինատը թողարկում է միայն 4 տեսակի արտադրանք՝ ձուլածո քուջ, ձևափոխելի քուջ, նորույշարային քուջ և «Սինտիկ» կոչվող՝ քուջի և երկարի օրսիդների խառնուրդ (շիխտա), որն էլ այլ ձեռնարկություններում օգտագործվում է բարձրորակ պողպատ ձուլելու համար:

«Սվորողնի սոկոլ» կոմբինատը, որքանով տեղեկացանք ինտերնետ կայի օգնությամբ, երկարաքարի խառնութերի վերամշակման ժամանակ նշված արտադրանքներից բացի այլ արտադրանքներ չի թողարկում: Դա նշանակում է, որ երկարաքարի մեջ պարունակվող երկարից բացի այլ տարրեր (երկարի հետ հարակից տարածված) չեն կորզվում: Մեզ այդպիսի մետալուրգիական գործարան չէ որ պետք է. մեզ պետք է գործարան, որը կարողանա երկարաքարերից կորզել և երկարը, և երկարի հետ զուգակցվող՝ հարակից տարածված, շատ քանիքարժեք ու շատ կարևոր տարրերը ևս: Դրա համար էլ անհրաժեշտ է օգտագործելով «Սվորողնի սոկոլ» կոմբինատի փորձը, տեխնիկան և տեխնոլոգիաները, չբավարարվել դրանով, դրան ավելացնել մերը, նորագույնը, հայրենականը, այսինքն՝ մշակել ու ներդնել երկարաքարերի մեջ պարունակվող հարակից տարրերի բարձր տոկոսներով կորզման տեխնոլոգիա, որն էլ մեր սև մետալուրգիայի արդյունաբերությունը կարող է դարձնել տասնավատիկ ավելի արդյունավետ:

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի քամինի վարիչ, երկր.հանք. գիտ. դոկտոր

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«Մի «հիանալի» ակնքարք կարող է առաջանալ «քննապահպանական շղթայական ռեակցիա» և կփոփոխվի ողջ բիոմիջավայրը: Ե՞րբ այդպիսին կառաջանա՝ գիտությունը կանխատեսել չի կարողանում: Բննապահպաններն ասում են՝ դա կարող է տեղի ունենալ ցանկացած ժամանակ. ամեն ինչ արդեն հասունացել է:»

Աշխարհն այսօր ապրում է մեր կյանքի պատմության մեջ նմանը չունեցող՝ անընդհատ ուժգնացող գլորալ էկոլոգիական ճգնաժամի պայմաններում, որի բարկացուցիչ մասն են կազմում մոլորակի չվերականգնվող ռեսուրսների սպառումը, կլիմայի փոփոխությունը, որն առաջանում է արդյունաբերական արտանետումների ազդեցությամբ, կենդանի օրգանիզմի մահացությունը, բույսերի և կենդանիների զարգացման և տեսակների թվի ու դրանց կյանքի տևողության կրծատման, մարդու՝ որպես բիոլոգիական տեսակի այլասերումը, նրա ֆիզիկական ու մտավոր կարողությունների դեգրադացիան»¹: Այս ամենը Լյուդմիլա Ֆիոնովան գրում է վերացական և համընդհանուր տեսակնետով, առանց կոնկրետ օրինակների: Մենք

¹ Людмила Фионова – Фининтерн – машина по уничтожению человечества. Деловой экспресс, №21, июнь, 2009.

ցանկանում ենք այդ ամենին տալ ավելի կոնկրետ բնույթ, շաղկապված մեր տարածաշրջանի, մեր բնակավայրի և բնական միջավայրի հետ:

Եվ այսպես՝ Սյունիքի մարզի տարածքում են շահագործվում մեր հանրապետության պղնձամոլիրդենային և ոսկի-քազմամետաղային խոշորագույն հանքավայրերից մի քանիսը: Դրանցից են Քաջարանի և Ազարակի պղնձամոլիրդենային և Շահումյանի ոսկի-քազմամետաղային հանքավայրերը, որոնց շահագործման արդյունքով բնական միջավայրին հասցում են այնպիսի սարսափելի վնասներ, որի մասին մտածելիս մարդու մարմնով սարսուռ է անցնում:

Այդ հանքավայրերի շահագործման և հանքահարստացման գործընթացներում օգտակար տարրերի (օգտակար են, եթե դրանք կորզվում ու օգտագործման մեջ են ներդրվում, բայց խիստ վնասակար են, եթե դրանք հանքահարստացման քափոնների՝ հարատապչերի հետ թափվում են շրջակա միջավայր) թերկորզման, իսկ որոշակի հանքանյութերի չկորզման հետևանքով յուրաքանչյուր տարի շրջակա միջավայր են թափվում միջինավոր ու տասնյակ միջինավոր տոննաների հարստապչեր, որոնց հետ էլ հազարավոր ու տասնյակ հազարավոր տոննաներով ծանր մետաղներ ու բունավոր տարրեր:

Բերենք կոնկրետ օրինակներ.

- Քաջարանի պղնձամոլիրդենային հանքավայրը Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմքինատի կողմից շահագործվում է 1951 թվականից (ավելի, քան 58 տարի): Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմքինատի կողմից բողարկվում էին և այժմ էլ բողարկվում են կիսաարտադրանքներ՝ պղնձի և մոլիրդենի խտանյութեր, որոնք ԽՍՀՄ-ի օրոք վերամշակվում էին ԽՍՀՄ-ի տարածքում. պղնձի խտանյութերը՝ Ալավերդու մետաղորգիական կոմքինատում, իսկ մոլիրդենինը՝ Ռուսաստանի Չելյաբինսկ և Օրջոնիկիձե (այժմ Վլադիկավկազ) քաղաքներում: Այժմ այդ խտանյութերը մեծամասամբ վաճառվում են արտասահմանյան երկրներին:

Ինչպես ԽՍՀՄ-ի օրոք, այնպես էլ այժմ, և շատ ավելի վատ այժմ, օգտակար տարրերը հանքաքարերից խտանյութերի մեջ են կորզվում շատ ցածր տոկոսներով: Շշմարտացի լինելու համար բերենք մի քանի օրինակ.

- 1988-1990թթ. բողարկված պղնձի խտանյութում պղնձն մետաղի միջին պարունակությունը կազմել է 17,9%, իսկ պղնձի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ՝ 72,5%, մոլիրդենի խտանյութերում մոլիրդեն մետաղի միջին պարունակությունը կազմել է 51,41%, իսկ մոլիրդենի կորզումը՝ 81,4%,
- 1998-2000թթ. բողարկված պղնձի խտանյութերում պղնձն մետաղի միջին պարունակությունը կազմել է 24%, իսկ պղնձի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ՝ 60,85%, մոլիրդենի խտանյութերում մոլիրդեն մետաղի միջին պարունակությունը կազմել է 50,79%, իսկ մոլիրդենի կորզումը՝ 72,89%:

Նշենք, որ Քաջարանի հանքավայրում հիմնական (քանակական մեծամասնություն կազմող) հանքանյութեր են համարվում պղնձի խալկոպիրիտը, մոլիրդենի մոլիրդենիտը և ծծմբի հրաքար պիրիտը, ընդ որում պիրիտ հանքանյութի, որը, ի դեպք, բոլորովին չի կորզվում և ամբողջությամբ պոչամբար է թափվում, քանակը շատ ավելին է, քան պղնձի խալկոպիրիտինը:

Նշված հիմնական տարրերի հետ զուգակցված (սերտորեն կապված) են մի քանի շատ կարևոր և շատ էլ արժեքավոր տարրեր՝ ռենիում, սելեն, տելլուր, բիսմուտ, ոսկի, արծաթ, պլատին, պալադիում և այլն: Առանձին հանքանյութերի տեսքով Քաջարանի հանքաքարերում հայտնաբերված են նաև կապարի, ցինկի, կորալտի, նիկելի, մկնդեղի, երկարի, տիտանի, վանադիումի և սկանդիումի հանքայնացումներ, որոնցից մի քանիսի (կապարի, ցինկի,

մկնդեղի) հանքանյութերը հանքահարստացման գործընթացներում, հիմնական օգտակար տարրերին ուղղի համեմատական քանակներով, անցնում են խտանյութերի մեջ, իսկ մյուս մասը, ինչպես և հիմնական տարրերինը, չկորզվող հանքանյութերի և օգտակար տարրերի (մագնետիտի, երկարի, տիտանի, վանադիտմի, սկանդիտմի, պիրիտի հանքանյութի) հետ միասին թափում են պոչամբարներ և բունավորում շրջակա միջավայրը: Նշենք, որ սելենը, տելլուրը, մկնդեղը, կաղմիումը և սնդիկը, որոնք Քաջարանի հանքաքարերում հանդիպում են հազվադեպ, շատ քիչ քանակությամբ, բայց այնուամենայնիվ, նշված մյուս տարրերի հետ համահավասար, բունավոր են և դրանք բոլորն էլ խիստ վտանգավոր են բուսական և կենդանական աշխարհի համար (նշված տարրերը բունավոր են նույնիսկ իրենց միացությունների՝ հանքանյութերի տեսքով):

Բերված երկու օրինակներից պարզ երևում է, որ յուրաքանչյուր տարի, օգտակար տարրերի թերկորզման հետևանքով բնական միջավայր են թափում ծանր մետաղների բունավոր տարրեր, բոլորն էլ խիստ վտանգավոր՝ 18,6-ից մինչև 39,15%-ը, որոնց կշռային քանակները կազմում են հարյուրավոր ու հազարավոր տոննաներ (հիմնավորենք):

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում (1951 թվից մինչև 2009թ.) դրա ընդերքից արդյունահանվել և մշակվել է 318,2 մլն տ հանքաքար, որի մեջ պարունակվող օգտակար տարրերի քանակները կազմել են.

- պղնձինը՝ 707358,6 տ, մոլիբդենինը՝ 118688,6 տ, ռենիումինը՝ 50,91 տ (որից 5,36 տ պիրիտ հանքանյութի մեջ), ոսկունը՝ 8909,6 կգ, արծարինը՝ 496,392 տ, սելենինը՝ 515,484 տ, տելլուրինը՝ 429,57 տ, բիսմուտինը՝ 496,392 տ, նիկելինը՝ 532,985 տ, կորալտինը՝ 199,83 տ, կապարինը՝ 9227,8 տ, ցինկինը՝ 8177,74 տ: Նշված տարրերից հանքահարստացման գործընթացներում թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված քանակները կազմել են.
- պղնձինը՝ 222747 տ, մոլիբդենինը՝ 26194,6 տ, ռենիումինը՝ 23,995 տ (որից 5,36 տ պիրիտ հանքանյութի հետ), սելենինը՝ 430 տ (որից 282,1 տ պիրիտ հանքանյութի հետ), տելլուրինը՝ 313,78 տ (որից 275 տ պիրիտ հանքանյութի հետ), բիսմուտինը՝ 296,44 տ (որից 225 տ պիրիտ հանքանյութի հետ), ոսկունը՝ 2805,6 կգ, արծարինը՝ 306,3 տ (որից 150 տ պիրիտ հանքանյութի հետ), նիկելինը՝ 117,63 տ, կորալտինը՝ 44,1 տ, կապարինը՝ 290,8 տ, ցինկինը՝ 2575,2 տ:

Պոչամբարներ թափված պիրիտ հանքանյութի քանակն արդյունահանված 318,2 մլն տ հանքաքարերում կազմել է 3571.159 տ, որի հետ կապված ծծումը տարրի քանակը կազմել է 1.908.780 տ, իսկ երկար մետաղինը՝ 1.662.379 տ: Պիրիտ հանքանյութի հետ պոչամբար են թափվել նաև վերը նշված քանակներով ռենիում, սելեն, տելլուր, բիսմուտ, արծար (հավանաբար նաև ոսկի, պլատին և պլատիտմ, որոնց գծով անալիզներ չեն կատարվել, բայց երկրաբանական գիտությանը հայտնի են, որ պիրիտի հետ դրանք հանդիպում են համարյա մշտապես, հատկապես պղնձամոլիբդենային, բազմամետաղային, ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքավայրերում): Քաջարանի հանքավայրի առանձին տեղամասերում, աշըռվ տեսանելի քանակներով, հայտնաբերված են նաև մկնդեղի արսենոպիրիտ և ծարիդի անտիմոնիտ սուլֆիդային հանքանյութերը, որոնց քանակները շատ քիչ են և տարածված են ոչ ամենուրեք, բայց, այնուամենայնիվ, դրանք առկա են: Պոչամբարները, որոնք իրենցից ներկայացնում են փշրված, մանրացված, հանքահարստացման նպատակով քիմիկատներով մշակված, օգտակար (վնասակար, քանի որ դրանք չեն կորզվել) տարրերով ու ծանր մետաղներով առեցուն հանքաքարերի կուտակներ, լցված են Սյունիքի մարզի (Կապանի շրջանի) քնակավայրերի շրջակայքի ձորերն ու ձորակները: Մընոլորտային տեղումների, գրունտային

շրերի, քամիների, ընտանի և վայրի կենդանիների ու թռչունների շարժման հետ այդ ծանր մետաղների և թունավոր տարրերի նրբահատիկ փոշիներն ու տարրալուծված նյութերը տարածվելով դեպի շրջակա միջավայր թունավորում են օդը, ջուրը, հողը և, վերջին հաշվով, ընտանի և վայրի կենդանիներին ու մարդկանց:

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսաֆերային հետազոտությունների» կենտրոնի տնօրեն Ա.Սաղաթելյանի հաղորդման համաձայն (Panorama.am.) «Կապան քաղաքի տարածքում փոշու մեջ հայտնաբերվել են հիբերտոքսիկանտներ (մասնագետները դրանց աղբյուրը գտել են պոչամբարներում): Հայտնաբերվել են սննդիկ և կաղմիում, որոնք ծանր մետաղներից ամենավտանգությունը են համարվում»:

Ա.Սաղաթելյանը գրում է՝ «Ուսումնասիրության ենթարկելով քաղաքի տարրեր պոչամբարներում արածող կովերի կարի քաղաքությունը, մասնագետները պարզել են, որ այնտեղ առկա է սննդիկ, կաղմիումի, մկնդեղի, իսկ հիմնական մայրուղուն հարակից տարածքում արածող կովերի կարում նաև կապարի մնացուկներ: Հետազոտվել են նաև Քաջարանի 12 և հարակից Լեռնաձոր գյուղի 5 երեխայի առողջական վիճակը: Քաջարանի երեխաների 70%-ի մոտ մազերում մկնդեղի գերխառություն է հայտնաբերվել, բոլորի մոտ կա կաղմիումի, նիկելի, պղմանի գերազանցություններ, իսկ 4 երեխայի մոտ՝ սննդիկի գերխառություն: Քաջարանի քաղաքապետարանն իր միջոցներով այդ երեխաներին բուժման է ուղարկել և պարզել է, որ նրանց մոտ առողջական լուրջ խնդիրներ կան: Այդ քաղաքում կարելի է անգեն աշխով նկատել անեմիա հիվանդությունը: Առավել վատ վիճակ մասնագետները գրանցել են Սյունիքի գյուղական համայնքներում, որտեղ որևէ մաքուր սննդամբերք չի աճում, յուրաքանչյուրում առկա են տարրեր մետաղների գերնորմատիվային ցուցանիշներ»:

Այդ ամենին էլ ավելանում են Քաջարանի հանքաքարերում առկա ռադիոակտիվ տարրերը (ուրանի հանքայնացումները), որոնց մասին քաջատեղյակ են այդ հանքավայրը հետախուզող երկրաբանները, բայց բոլորովին գաղափար անգամ չունեն ինչպես Քաջարան քաղաքի, այնպես էլ շրջակա գյուղերի բնակիչները: Ռադիոակտիվ տարրերից առավել մեծ վտանգների են ենթարկվում պոչամբարներին մոտ գտնվող գյուղերի բնակիչները:

Համբահայտ է, որ Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանված հանքաքարերը հանքահարստացման ենթարկելուց առաջ փշրվում ու մանրացվում են, որի ընթացքում էլ բացվում ու մերկացվում են երկրի ընդերքում՝ հոծ քարաքեկորների մեջ խորը թաղված հանքանյութերը, այդ բվում նաև ուրանի հանքայնացումները: Վերջիններս մի քանի այլ հանքանյութերի (երկարի մազմետիտի, վանադիտմի, սկանդիտմի և այլ տարրերի հանքանյութերի) հետ շրջանցելով խտանյութերն անցնում են պոչամբների մեջ և թափվում պոչամբարներ՝ շրջապատ սփռելով իրենց մահաբեր վտանգը: Ծիշտ է. ուրանի հանքայնացման պարունակությունը Քաջարանի հանքաքարերում շատ փոքր է, բայց և այնպես դա ռադիոակտիվ հանքայնացում է և շատ ու շատ վտանգավոր մոտակայքում գտնվող մարդկանց ու կենդանիների համար: Այն էլ նշենք, որ դրանք մբնուրտային տեղումների ազդեցության ներքո դանդաղորեն տարրալուծվելով կարող են անցնել գրունտային ջրերի և պոչամբարներից ցած գտնվող բուսականության մեջ և վերջիններից էլ մարդկանց ու կենդանիների օրգանիզմ: Դրանից հետո թե ինչ տեղի կունենա՝ դժվար չէ կռահել:

Պոչամբարները վտանգավոր են ոչ միայն ծանր մետաղներով ու թունավոր տարրերով, այլ նաև թունավոր գագերով, որոնք առաջանում են պոչամբարներում բնական քիմիական ճանապարհով և գոյատեսում են այնքան ժամանակ, քանի դեռ գոյատեսում են պոչամբարները, իսկ վերջիններս գոյատեսում են և գոյատելու են հազարավոր տարիներ: Պոչամբարներում առկա սուլֆիդային հանքանյութերի տարրալուծման հետևանքով գոյանում է ծծմբաքրու, որն

Էլ ազդելով մկնդեղի և ծարիրի հանքանյութերի վրա, դրանց հետ մտնելով քիմիական ռեակցիայի մեջ, առաջացնում է արսին (AsH_3) և ստիրին (SbH_3) խիստ քունավոր գազերը, որոնց առաջացման ռեակցիաները արտահայտվում են հետևյալ կերպ:

1. բնական ճանապարհով ծծմբաթթվի առաջացման ռեակցիան՝
 $\text{FeS}_2(\text{պիրիտ}) + 2\text{H}_2\text{O} + 3\text{O}_2 = 2\text{H}_2\text{SO}_4 + \text{Fe}$,
2. արսին գազի բնական ճանապարհով առաջացման ռեակցիան՝
 $2\text{FeAsS}(\text{արսենոպիրիտ}) + 3\text{H}_2\text{SO}_4 = 2\text{AsH}_3 \text{ (արսին)} + 5\text{SO}_2 + 2\text{FeO}$,
3. ստիրին գազի բնական ճանապարհով առաջացման ռեակցիան՝
 $\text{Sb}_2\text{S}_3(\text{անտիմոնիտ}) + 3\text{H}_2\text{SO}_4 = 2\text{SbH}_3 \text{ (ստիրին)} + 6\text{SO}_2$:

Նույնանման իրավիճակ է տիրում նաև Ազարակի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման հետևանքով շրջապատ թափված և թափվող հարստապոչերի պոչամբարներում: Բայց, ամբողջ հարցն այն է, որ Ազարակի պղնչամբարները գտնվում են Սեղրու շրջանի ցածրադիր վայրերում, Արաքս գետի ձախափնյա մասում, որոնցից ներքև միայն Արաքս գետն է և չկան ավանեներ ու օյուղական բնակավայրեր, որոնց բնակիչները ենթարկվեին քունավոր տարրերի ու ծանր մետաղների վնասակար ազդեցությանը (վտանգի տակ կարող են գտնվել պղնչամբարների շրջակայրում աշխատող փոքրաթիվ մարդիկ և արածող կենդանիները: Այնպես, որ այստեղ վտանգները ջաջարանի համեմատ շատ ավելի փոքր են, բայց, այնուամենայնիվ, դրանք առկա են):

Շատ ավելի վատ վիճակում են Գեղանուշ գյուղի բնակիչները:

Յու Կուլեշովան¹ գրում է՝ «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսսիքերային հետազոտությունների կենտրոնի տվյալների համաձայն համայնքի հողի նմուշներում նկատվում են մետաղների սահմանային քույլատրելի կուտակումների գերազանցում՝ պղնձի գծով՝ 6 անգամ, մոլիբդենի գծով՝ 4 անգամ, նիկելի գծով՝ 2,4 անգամ, սնդիկի գծով՝ 30 անգամ, կաղմիումի գծով՝ 10 անգամ: Նշենք, որ կաղմիումը և սնդիկը համարվում են բարձր քունավորության տարրեր՝ առողջ կյանքի չափանիշներին անհամատեղելի: Եվ այդ աղտոտվածությունները հողի մեջ պահպանվում են երկար տարիներ, եթե ոչ մշտապես և շարունակում են իրենց քայլայիշ ազդեցությունը: Գյուղում շատ են օնկոլոգիական հիվանդությունները, հատկապես կանանց մոտ»:

Գևորգ Գրաելյանն իր հորդվածում² գրում է՝ «Քննապահպանական առումով Կապանի տարածաշրջանը հանդիսանում է, ինչպես այժմ ընդունված է ասել, ոխկային: Ըստ էության դա կոռեկտ բնորոշում է այն կործանարար գործունեության, որը տեղի է ունենում դարեր շարունակ օգտակար հանածոների՝ պղնձի, ոսկու, մոլիբդենի արդյունահանման հետևանքով: Այժմ միջավայրի էկոհամակարգի վրա ազդող հիմնական ձեռնարկություններն են. Զանգեզորիի պղնձամոլիբդենային կոմբինատը և Deno Gold Mining-ը: Այդ տարածքի հողի վրա աճեցված մքերքների օգտագործումը՝ երկարատև (աղտոտության աստիճանից կախված նաև կարճատև) ժամանակահատվածում կործանարար ազդեցություն է ունենում մարդկանց առողջության վրա»:

Շատ շխորանալով նշված հոդվածների վերլուծման մեջ, նշենք, որ դրանց հիմնական բովանդակությունն ամփոփված է նշված նախադասությունների մեջ:

Այժմ հակիմ տեղեկություններ հաղորդենք շահագործման նախապատրաստվող Թեղուտի (Լոռու մարզ) պղնձամոլիբդենային հանքավայրի և դրա շահագործման հետևանքով բնական միջավայրին հասցեվելիք վտանգների մասին:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի հաշվեկշռային պաշարները կազմում են.

¹ Ю.Кулемешева – Заложники руды, Деловой экспресс, №2, 2010.

² Р.Гրձելյан – Армянский образ иностранной компании, Голос Армении, 23 января 2010.

հանքաքարերինը՝ 459,24 մլն տ, պղնձինը՝ 1630,2 հազ.տ, մոլիբդենինը՝ 99116,8տ, ծծմբինը՝ 17021,5 հազ.տ, ուկունը՝ 4776,2կգ, արծաթինը՝ 303,8տ: Անհասկանալի պատճառով երկրաքանների կողմից ունիումի պաշարներ չեն հաշվարկվել և Պաշարների պետական հանձնաժողովի կողմից չեն հաստատվել, սակայն այս հանքավայրի շահագործման իրավունքն ստացած՝ «Արմենիան քափը փրոգրամ» ընկերության կողմից կազմված «աշխատանքային նախագծում» կան ունիումի համար գնահատված 44,8կգ պաշարներ: Գ.Փիջյանի¹ տվյալների հիմնա վրա մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ունիումի պաշարները մոլիբդենի հաշվեկշռային պաշարներում կազմում են 120,71տ:

Վերը նշված ընկերությունը նախագծել է հանքավայրը շահագործելիս դրա ընդերքից տարեկան (առաջին 8 տարիներին) արդյունահանել և մշակել 7 մլն տ հանքաքար, հետագա 4 տարիներին արդյունահանման քանակը պետք է կրկնապատկվի, իսկ այնուհետև՝ եռապատկվի:

Գ.Փիջյանի տվյալներով Թեղուտի հանքավայրի հիմնական՝ պղինձ և մոլիբդեն մետաղների հանքանյութերի մեջ սելեն տարրի քանակը կազմում է 1637,3տ, իսկ տելլուրինը՝ 8,3տ: Սակայն նշված քանակներով չեն սահմանափակվում սելեն և տելլուր թունավոր տարրերը: Սելեն և տելլուր են հայտնաբերված նաև իր քանակով առաջին տեղն գրադեցնող ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութի մեջ: Ծծմբի պարունակությունից ելնելով պիրիտ հանքանյութի մեր կողմից հաշվարկված քանակը Թեղուտի հանքաքարերում կազմում է 28642,3 հազ.տ, իսկ սելենի և տելլուրի քանակները պիրիտ հանքանյութի մեջ կազմում են համապատասխանաքար՝ 572,85 և 401,0տ:

Թեղուտի հանքավայրի շահագործման նախագծով նախատեսված է, որ ընկերությունը քողարկելու է միայն և միայն պղնձի և մոլիբդենի խտանյութեր, որոնք վաճառվելու են արտասահմանյան երկրներին:

Այնպես, ինչպես Հայաստանում շահագործվող բոլոր հանքավայրերի պարագայում, Թեղուտի հանքաքարերի հարստացման պարագայում ևս պիրիտ հանքանյութի խտանյութ չի ստացվելու, ասել է թե՝ պիրիտն իր մեջ պարունակվող ծծումը, երկար, սելեն, տելլուր և այլ, դեռևս չհետազոտված, բայց սպասվող տարրերով հանդերձ ամրողությամբ թափվելու է պոչամբար և թունավորելու է միջավայրը: Պոչամբար են թափվելու նաև հիմնական օգտակար հանածոներ համարվող պղնձի և մոլիբդենի թերկորզման հետևանքով մնացած 20-30% քանակները, որոնց հետ էլ պոչամբար կրափվեն համապատասխան քանակների սելեն և տելլուր թունավոր տարրերը:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերում քիչ, բայց, այնուամենայնիվ, աչքով տեսանելի քանակությամբ հայտնաբերված են նաև կապարի գալենիտ, ցինկի սփալերիտ, մկնդեղի արսենոպիրիտ և այլ հանքանյութեր, որոնց մի մասը հանքահարստացման գործընթացներում կարող է անցնել խտանյութերի մեջ, իսկ մյուս մասը՝ թափվելու է պոչամբարներ:

Թեղուտի հանքավայրի տարածքին և շրջակա միջավայրի բնակչությանը հասցվող վնասներն ու վտանգները չեն սահմանափակվում միայն պոչամբարներից շրջակա միջավայր սփռվող ծանր մետաղների և թունավոր տարրերի թունավորումներով: Բավականաչափ մեծ վնասներ ու վտանգներ են սպասվում այդ տարածքի գեղատեսիլ անտառների ոչնչացումից: Գ.Ա.Բելլերը² (էջ 64) գրում է՝ «Մեկ հեկտար անտառը տարեկան մաքրում է 20 մլն խոր.մ մթնոլորտ, խոնավացնում է օղը տասն անգամ ավելի, քան դա անում է մեկ հեկտար

¹ Պիդյան Գ.Օ. Մեծո-մոլիբդենովայ ֆորմացիա րուդ Արմենիական Հանքավայր Երևան, Իզդ. ԱՆ Արմ. ՀՀ, 1975, 310c.

² Բելլեր Գ.Ա. Էկզամեն разума, Մոսկվա, “Мысль”, 1988, 252 ս.

մակերեսով ջուրը: Անտառը արտադրում է «մթնոլորտի վիտամիններ»՝ ֆիտոնցիդներ կոչվող նյութը, որի մի քանի տասնյակ կգ-ը բավարար է միջին չափերի քաղաքի բոլոր վնասակար մանրէները ոչնչացնելու համար»:

Գ.Ա.Բելլերը այնուհետև գրում է՝ «Այժմ հանրահայտ է անտառի ազդեցությունը մթնոլորտի ջերմային հաշվեկշռի վրա, ջրերի պահպանության, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանության գործում, որոնց կրծատումը փոխում է էվոլյուցիայի ուղին: Արևադարձային անտառները հարուստ ծագումնաբանական (գենետիկական) միջավայր են, որոնցում կենտրոնացված է երկրի բուսական ու կենդանական տեսակների կեսից ավելին:

Բժիշկները գտնում են, որ արևադարձային անտառների ոչնչացումը կարող է լրջորեն խանգարել հիվանդությունների դեմ ուղղված պայքարին, հատկապես օնկոլոգիական» (էջ 64):

Այժմ տեսնենք, թե ինչ է սպասվում Լոռու մարզի բնակչությանը, հատկապես Թեղուտի հանքավայրի շրջակա տարածքի և ձորերով ու Դեբեդ գետի հոսանքով Թեղուտից ներքև ընկած բնակավայրերի բնակչությանը, եթե Թեղուտի հանքավայրի շահագործման հետևանքով տարեկան 7, այնուհետև 14 և 21 մլն տ փշրված ու մանրացված հանքաքարերի հետ պոչամբարներ կրավիւն բացված ու մերկացված սելեն, տելլուր, մկնիտ բունավոր տարրերի հսկա քանակներ (սելեն՝ 4,64-ից մինչև 13,92տ, տելլուր՝ 3,25-ից մինչև 9,75տ, մկնիտ՝ դրանցից մոտ տասն անգամ պակաս), ինչպես նաև կապար, ցինկ, կաղմիում (կապված ցինկի հետ) և պղինձ ու մոլիբդեն, որոնցից կապարը, ցինկը և կաղմիումը քիչ (շատ ավելի քիչ, քան պղինձը), բայց, այնուամենայնիվ, որոշակի քանակությամբ, որոնք բոլորն էլ նպաստում են սրտանորային հիվանդությունների և քաղցկեղի առաջացմանը: Շրջակա անտառների ոչնչացման և ծանր մետաղների ու բունավոր տարրերի առկայության պայմաններում (օդում, ջրում և հողում) գլուխ են բարձրացնելու և արագ քափով զարգանալու զանազան հիվանդություններ, որոնք անհնար են դարձնելու նշանակած տարածքում ապրելը:

Գտնում ենք, որ արդեն իսկ շահագործվող հանքավայրերը, հատկապես պղնձամոլիք-դենային, պետք է շահագործվեն, իսկ Թեղուտի հանքավայրն այժմ և առաջիկա մի քանի հարյուր տարիներին չպետք է շահագործվի (այն պետք է պահարկվի հեռավոր ապագայի համար): Շահագործվող հանքավայրերից քիսող վտանգները, եթե ոչ խապար վերացնելու, ապա, գոնե, առավելագույնս կրծատելու և մեղմելու միակ ճանապարհ՝ հանքաքարերից օգտակար տարրերի (որոնք պոչամբների մեջ մնալու պարագայում դառնում են վտանգավոր) բարձր ու գերբարձր տուկոսներով (92-95-96) կորզումն է: Որքան քիչ տարրեր մնան հանքահարստացման բափոններում (հարստապոչերում) այնքանով էլ կարող են նվազել դրանցից սպասվող վտանգները: Այս առաջարկությունը վերաբերում է այժմվաճից հետո կատարվելիք (եթե կատարվեն) հանքահարստացումներին: Բայց, չէ՞ որ շահագործվող հանքավայրերի շրջակայքում արդեն իսկ կուտակված են ծանր մետաղներով ու բունավոր տարրերով առեցուն՝ միլիոնավոր, տասնյակ և հարյուր միլիոնավոր տոննաներով պոչամբներ, որոնք արդեն իսկ կատարում են իրենց սև գործը՝ բունավորում են միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհը, այդ թվում՝ ցավալիորեն մեր բնակչության ամենաթույլ և անկարող մասին՝ ծերերին ու երեխաներին: Այդ վտանգներն էլ վերացնելու միակ ճանապարհը մենք տեսնում ենք պոչամբարներում կուտակված պոչամբների վերամշակման մեջ, դրանցից օգտակար տարրերի (ծանր մետաղների ու բունավոր տարրերի) բարձր ու գերբարձր տուկոսներով կորզման մեջ:

Իր ու իր ժողովրդին սիրող, անտառների հիասքանչ հատկություններին քիչ թե շատ ծանր մարդը (հայր) ոչ թե պետք է անտառներ ոչնչացնի (անկախ նրանից, թե ինչ է ստանալու, քանի միլիոն դոլար է կուտակելու այդ ոչնչացման արդյունքով), այլ հնարավորինս ծառա-

տունկ պետք է կսպակերպի, նոր անտառներ պետք է հիմնի, թթվածին ու ֆիտոնցիդներ ավելացնի, ջուր, կենդանական ու բուսական աշխարհ պահի և, ի վերջո, այս Հայաստանի տարածքում բնակչություն՝ հայ պահի:

Լյուդմիլա Ֆիոնովան իր հոդվածում գրում է՝ «Համատարած անտառահատումների պատճառով (այժմ աշխարհում տարեկան ոչնչացվում է 11 մլն հեկտար անտառ) մթնոլորտում մեծ թափով աճում է ջերմոցային գազերի քանակը (այն այժմ 37%-ով գերազանցում է կանխատեսումները): Դրա արդյունքով մթնոլորտում նվազում է թթվածնի քանակը, նվազում է նաև տեղումների քանակը ցամաքի վրա, անապատացումը սպառնում է ցամաքի մեկ քառորդ մասին (32 մլն քառ.կմ տարածքին):»:

Չինք ցանկանա, որ առաջիններից մեկը անապատացվեր մեր փոքրիկ հայրենիքի (29,74 հազ. քառ.կմ) տարածքը:

Վերջաբանի փոխարեն նշենք, որ Հայաստանի բնակչությանը սպառնացող ամենամեծ վտանգը պոչամբարներից ու անտառահատումներից ծագող վտանգն է: Հանքահարստացման պոչամբարների ծավալների և թվաքանակի մեծացման և անտառահատումների հետևանքով նվազում են մշակման համար պիտանի հողատարածքները, Հայաստանի ջրի և պարենի պաշարները ու ռեսուրսները, աղտոտվում են օդը, հողն ու ջուրը, քունավորվում ու մահանում են մարդիկ ու կենդանիները: Եվ, պատահական չեր, որ Լյուդմիլա Ֆիոնովան գրում է՝ «Մոլորակի բնակչության համարյա կես մասը տառապում է սովից, համարյա 40%-ը՝ խմելու ջրի պակասից: Միացյալ ազգերի կազմակերպության տվյալներով ջրի և օդի աղտոտումից երկրի վրա տարեկան մահանում է 2,5 մլն մարդ: Կարծում ենք, որ՝ եթե ոչ ամբողջությամբ ջրի աղտոտման, ապա օդի, հողի և հողից ստացած բերք ու բարիքի աղտոտման հետևանքով Հայաստանում մահացության դեպքերը, տոկոսային հարաբերությամբ պակաս չեն կարող լինել համաշխարհային չափանիշներից (ափսոս, որ մեզ մոտ այդպիսի տվյալներ չեն հրապարակվում): Ինչելիցե, այժմ, հենց այսօրվանից մենք պետք է խստագույնս մտահոգվենք առողջ բնակչություն ունենալու հարցով, պետք է աշխատենք մաքրել ու մաքուր պահել մեր բնական միջավայրը, մեր հողն ու ջուրը, մեր հանրապետության տարածքի օդը, մեր հանապազօրյա «հացը»»: